ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, 21 սեպտ. 1902 թ.

«Մուրճի» այս տարուայ № 8-ի մէջ կարդացի Եր. Ֆրանգեանի գրած «Պարսկաստանի տնտեսական դրութիւնը» յօդուածում, սնանկացող պարսկահայ զանազան առեւտրական տների շարքում, նաեւ «Արամեան ընկերութեան» անունը եւ միանգամայն զարմացած մնացի պարոնի գրածից՝ թէ այդ ի՞նչ նպատակով է գրել կամ ի՞նչ Արամեան ընկերութիւն է այդ, քանի որ կայ մի ընկերութիւն միայն այդ անունով՝ որ կազմուած է 1889 թուին եւ այդ օրուանից գործել է մեծ յաջողութեամբ. եւ նոյն եռանդով գործում է Ե՛ւ այսօր:

Ուստի զանազան թիւր կարծիքների տեղիք չը տալու եւ ընկերութեան պատիւն վերականգնելու համար պահանջում ենք պարոնից որ բարեհաճի հերքելու իր գրածը հայ պարբերական թերթերում*)։

ԲԱԲԱՋԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

---

*) Այս նամակը ստանալուց առաջ ինքը պ. Եր. Ֆրանգեանը յայտնել էր մեզ իր արած ակամայ սխալի մասին և խնդրել էր ուղղել այդ ցաւալի թիւրիմացութիւնը

Խմբ.